

*) Տէրութեան—Աբգայ Մխիթարայ վարդապետ
Պատճառք, Զմիւռնիոս, 1879, էր. 8.

քանի գումարներով, վրա է հասնում եւ տես-
նում է, որ Կարսի շրջանի պահպանման ձեռնար-
քները, մօտ 30 մարդ, պաշարել են աւազակներ-
ին ինչ որ աւերակներու, ապա այդ պահա-
պանները զինվար ուժերով իրենց աւազակու-
թեամբ միացած ուժերով գլուխ է անցնում եւ
սկսում է կանոնաւոր պաշարում. շարունակ
երկու կողմից տեղի է ունենում հրացանա-
ձգութիւն: Իշխան Պազաւա, տեսնելով որ իր
մարդիկ ոչ մի միջոց չունեն պաշտպանվելու,
իսկ աւազակները լաւ պաշտպանված են աւե-
րակներով մէջ, եւ այդ պատճառով զուր տեղը
պետք է ժամանակ ու պատրաստութիւն, իր
մարդկանց գլուխ անցած մտքով գիշերին անվե-
ներ կերպով գրոհ է տալիս զէպի աւազակները
պատասխարժան տեղը: Բայց եւ այնպէս, աւա-
զակները չորս հոգի փախչում են. նոյն տեղը
թողնելով իրանց մէկ սպանված եւ մէկ ծանր
կերպով վիրաւորված ընկերներին, բոլոր ձիերը,
մի հրացան, պատրաստներ, չորեր եւ այլն:

Վիրաւորված եւ բռնված աւազակը հաղոր-
դել է հետեւեալը. ինքը Դաւիթ Խաչատուր է, ա-
ւազակային խմբի գլխավորը, իսկ սպանվածը
պարսկահայաւոր Տատ-Մաշադին է. չորս փա-
խածները թուրքեր են, Ղազարի, Բօրչալուի
եւ Ալեքսանդրօպօլի գաւառներից: Փախածների
մէջ աչքի ընկնող աւազակ է Աստան, թէ Աս-
լան-աղան (հաստատ չը գրտած աւազակապե-
տի հաղորդածը): Ոստիկանութեան կողմից
սպանվել է մի թուրք չափար, որ Կարսի շրջ-
անի պահպան ձեռնարկներից էր: Որովհետեւ
զէպը տեղի է ունեցել Կարսի շրջանի սահ-
մաններում (Աղաբաբայի բաժնում), այդ պատ-
ճառով բոլոր ձիերը, սպանված աւազակի դիա-
կը եւ վիրաւորված աւազակապետ Դաւիթ-
աւազակ տարել են Կարս. բայց աւազակային
խմբին այդպիսի մեծ կորուստներ պատճառողը
եղել է իշխան Պազաւան, որի անվերջութիւն-
նը արժանի է հրապարակական գոյախանութի:

Ի վերջոյ հարկաւոր եմ համարում աւելաց-
նելու, որ այդ աւազակները Ընդդիմ թուրք
ազգաբնակչութեան յուսով կը լինեն եկած այս
կողմերը, եւ, ի հարկէ, հայերի ու զուրադօր-
ների մէջ չեն կարող գոյութիւն պահպանել:

Սալլիման

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մենք հաղորդել էինք, որ առաջիկայ 1901
թւի ապրիլ ամսին պետք է կայանայ Թիֆլիսում
կովկասեան բժիշկների համագումրը: Այժմ մեզ
հաղորդում են, որ կովկասեան բժշկական ըն-
կերութիւնը իր վերջին նիստում, ուշադրու-
թեան առնելով այն հանգամանքը, որ եկող
տարի աշնանը պետք է Թիֆլիսում բացվի
կովկասեան ցուցահանդէսը, որոնց բժշկական
ժողովի բացումը յետաձգել մինչեւ աշնան:

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պե-
տերբուրգից, թէ իրաւաբանական ընկերու-
թեան մօտակայ ժողովներից մէկը նուիրված
կը լինի ամբողջովին Գ. Զանչեանի եւ Ա.
Ուրուսովի յիշատակին: Այդ նիստում զեկու-
ցումներ կը կարգան Սպասովիչի եւ ուրիշ ա-
կանաւոր իրաւաբանների Ռուս գրականագետ-
ների փոխադարձ օգնութեան միութիւնն եւս
հոկտեմբերի մէջ իր ժողովներից մէկը կը
նուիրէ Գ. Զանչեանի յիշատակին:

Ժողովրդական լուսաւորութեան միջնա-
րութիւնը այս տարվայ վերջում կը սկսէ քնն-
նել բնականաւոր դպրոց տարադասարան
սարաններում ընդունելու հարցը: Ենթադրու-
թիւն կայ ընդ ամբողջ նրանց մասին հա-
մալարանների մեթոտակական եւ բնական
գիտութիւնների բաժինները:

Երկրագործութեան միջնադպրութիւնը միջ-
նորութիւն է յարուցել պետական խորհրդում
իւրաքանչիւր տարի, հոկտեմբերից մինչեւ
մարտ, գիւղատնտեսական գիտութիւնների
դասընթացներ բանալ Պետերբուրգի Կայսերա-
կան գիւղատնտեսական թանգարանում այն
մարդկանց համար, որոնք կարիք են զգում այդ
գիտութիւնների, եւ առաւելագոյն գիւղատնտե-
սների համար:

Սեպտեմբերի 30-ին յայտնի իրաւագետ եւ
դատաստանական գործիչ Ա. Կոնի բարեկամ-
ները եւ յարգողները համագումար կերպով
տօնեցին նրա երեսնամեայ հասարակական
եւ պաշտօնական գործունէութեան յօբելանսը:

Ժողովրդական ուսումնարանների ուսուցիչ-
ների եւ ուսուցչուհիների համար հիմնված
կենսաթոշակի դրամարկը իր գործունէու-
թիւնը կը սկսէ առաջիկայ տարվայ յունվարի
1-ից: Ներկայումս միակակադրական տեղեկու-
թիւններ են հաւաքվում այն ուսիկների քա-
նակի մասին, որ ստանում են դրամարկի ա-
պագայ անդամները եւ մշակվում են յարմա-
րագոյն միջոցներ ուսիկներից որոշ տոկոս հա-
նելու համար յօգուտ կենսաթոշակի դրամարկի:

Երկրագործութեան միջնադպրութիւնը մտա-
դրութիւն ունի հետեւեալ տարվայ ընթաց-
քում կազմակերպել համառոտական գիւղա-
տնտեսական ցուցահանդէս: Միջնադպրութիւնը
այժմ մշակում է այդ ցուցահանդէսի ծրագիրը:

ՀԱՂԱՍՏ գիւղից մեզ գրում են. «Կարսի
երկաթուղին հաղթանակներին զրկեց միակ կա-
մուրջից: Հաղթանակ գտնվում է Ձորագետի աջ
կողմում, իսկ ձախ կողմում գիւղացիների ձը-
մբանոցներն են, անասուններ պահելու տեղը,
անա այդ կամուրջով հաղորդակցութիւն ու-
նէին գիւղացիները թէ ձմեռանոցներին եւ թէ
Կարսի երկաթուղու հետ: Կամուրջը միակն էր
նաեւ մօտակայ բազարի գիւղերի համար: Եր-
կաթուղու վարչութիւնը, գիծն անցկացնելու,
քանդակ կամուրջը եւ նրա տեղ Ախաթալա
կայարանի մօտ կառուցեց մի ժամանակաւոր
փայտեայ կամուրջ, որն այս քանի օրերս բո-
լորովին կործանվեց հեղեղներից: Այժմ մեր
հասարակութիւնը, լինելով չքաւոր դրութեան
մէջ եւ չունենալով հնարաւորութիւն կառու-
ցանելու նոր կամուրջ, մնացել է չուարած. ո-
րովհետեւ ոչ մի ճանապարհ չը կայ ձմեռանոց-
ների հետ հաղորդակցութիւն ունենալու, մնա-
ցած տեղերում երկաթուղին բոլոր ճանա-
պարհները փակել է, իսկ գծի կողքերին բա-
ւական է մի ապրանք բռնել, անդգին տու-
գանքներ առնելով հազիւ են բաց թողնում ի
նկատի ունենալով այս դրութիւնը, գեկտեմբե-
րի 13-ին, պ. Արամայիս Երզնկեանի եւսնա-
դուն ջանքերով, հաղթանակները հասարակա-
կան ժողով գումարներից, որոնք որոշեցին պա-
հանել երկաթուղու վարչութիւնից, որ վերա-
շինեն մեր կամուրջը, Հասարակութիւնն ընտ-
րեց վերոյիշեալ Երզնկեանին եւ տանուէրի
օգնականին՝ յանձնարարելով նրանց՝ յարաբե-
րութեան մէջ մտնել երկաթուղու վարչութեան
հետ: Յուսով ենք, որ երկաթուղու վարչու-
թիւնը, ի նկատի առնելով գիւղացիների չքա-
ւոր դրութիւնը, կը կատարէ հասարակութեան
օրինաւոր պահանջը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԲԱՆԿԻՏ
(Նամակ Պարիզից)

Դուք, անշուշտ, յիշում էք անցեալ մայիս
ամսին տեղի ունեցած մոնիսիպալական ընտ-
րութիւնները: Մոնիսիպալիտեանը, որ ընդ-
հանրապէս քաղաքականութեան հետ ոչ մի
կապ չունեն, այս տարի մի առանձին նշանա-
կութիւն էին ստացել:

Վերջին տարիները Փրանսիայում տեղի ու-
նեցած յայտնի դէպքերը նրան բաժանել էին
երկու բանալիների. մի կողմն էին արդարու-
թեան, ազատութեան, հաւատարմութեան պաշա-
պան, հանրապետութեան գաղափարին հաւա-
տարիւր անձինք. միւս կողմը՝ մի խառնիճա-
ղանձ կուսակցութիւն, ստի եւ կեղծիքի մէջ
ծնված, մեծացած, Դա իրօք մի կուսակցու-
թիւն չէր, այլ տարբեր տարրերից բաղկացած
մի վիճակ, որ այնքան քաղցութիւն չունէր
հրապարակ գալ իր իսկական անունով: Անտի-
սեմիտ, եղուիտ, բոյալիտ, յետադիմական եւ
այլն խմբեր եւ կազմել էին միասին ճանաչու-
նալիստ կոչված բանակը, որը հայրենասիրու-
թիւնը իր համար մօնօպօլիս դարձրած, ի ցոյց
ամբողջ աշխարհի գոռում, երգում էր, կուրծք
ծեծում, օձիք պատառում յանուն ազգի, յա-
նուն հայրենիքի: Նա գիշեր ցերեկ իրորում
էր միայն հանրապետութեան դէմ դաւեր լա-
րելու, նրան կործանելու, ոչնչացնելու համար...

Թիշեալ ընտրութիւնները տեղի ունեցան այդ
երկու սկզբունքների վրա՝ հանրապետական եւ
նացիօնալիստական: Յաղթութիւնը մնաց ա-
ռաջինին, միայն գումարներում. իսկ մայրա-
քաղաքն անցաւ նացիօնալիստներին: Պարիզը,
որանալով իր փառաւոր անցեալը, հրաժար-
վելով իր փայլաւոր գաղափարներից, գնում
նետովում է եղուիտների, իր վաղեմի թշնամի-
ների, գիրկը... Պարիզը ինքը իր ձեռքով գա-
նկեց արաւ իրան. նա այլ եւս ոչ մի հեղինա-

կութիւն, ոչ մի առաւելութիւն չունի գաւառի
վրա:

Բայց ոչ մի սխալ անպատիժ չէ մնում, վաղ
թէ ոչ նա ստանում է իր հատուցումը: Պա-
րիզի այդ հատուցումը տեղի ունեցաւ անցեալ
շաբաթ օրը, սեպտեմբերի 22-ին. դա մի փա-
ռաւոր դաս էր, որ տալիս էր հանրապետական
Փրանսիան իր մոլորված մայրաքաղաքին: Այդ
օրը անշնչելի կը մնայ երրորդ հանրապե-
տութեան տարեգրութիւնների մէջ. դա հան-
րապետական գաղափարի յաղթանակն էր:

Ձեզ անշուշտ հետագիւրը հաղորդած կը լինի
այդ տօնի մասին. դա մի բանկետ էր, մի հա-
սարակ ճաշկերոյթ, որ պիտի տար կառավա-
րութիւնը Փրանսիական համայնապետին
(maire), առաջին հանրապետութեան հրատա-
րական տարեդարձին: Բայց այդ հասարակ
հրաւերը դարձաւ մի ահագին ցոյց, որին ոչ
ոք չէր էլ սպասում: Այդ հանրապետական
բունդ զգացմունքների բռնկման եւ հակա-նա-
ցիօնալիստական ցոյցի սկզբնապատճառը եղան
իրանք նացիօնալիստները:

Պարիզի նացիօնալիստ քաղաքագլուխը լուս-
կայն յղացել էր մի մանօվր: Կառավարու-
թեան բանկետը խանդարելու համար նա ինքն
էլ իր կողմից սկսեց առանձին հրաւերներ ու-
ղարկել նոյն համայնապետներին ներկայ գտնվել
Պարիզի մոնիսիպալիտէի ճաշկերոյթին, ճաշ-
կերոյթ, որին նա անյարմար, անվայել էր հա-
մարել հրաւերել հանրապետութեան նախագա-
հին եւ միջնադպրութեան, մի խօսքով, դա մի հա-
կահանրապետական ցոյց էր, որ պատրաստու-
էր Պարիզի մոնիսիպալ խորհրդի նախագահ
Գրեթօվը: Համայնապետները, որպէս միասին
մարդիկ, երեւի այսպէս էր խորհում Պրեթօ-
վը:—Նկատելով այդ մանօվրը, անշուշտ
պիտի գային եւ ներկայ գտնվէին նացիօնա-
լիստների բանկետին, որ տեղի պիտի ունենար
սեպտեմբերի 23-ին: Ապա երբ բազմաթիւ կե-
րակուրներ ուտելուց եւ կենաց բաժակներ
դատարկելուց յետոյ բանկետը վերջացած կը
լինէր, ահ, այն ժամանակ Պարիզի մեր քա-
ղաքապետները եւ նրանց օրգանները վեհու-
թեան սօգան հագած պիտի գտնային. «Տեսնա՞ք
զու՞ք, որ ամբողջ Փրանսիայի համայնապետե-
րը՝ մեզ հետ սեղանակից լինելով, մեզ հետ
բաժակ բաժակի խմելով, մեր կողմնակից, մեր
քաղաքականութեան հետեւողներն են: Ուրեմն
մեր սիրած, մեր պաշտած Փրանսիան դատա-
պարտում է ձեզ եւ ձեր քաղաքականութիւն-
ը»... Բայց, զժաղաղաբար, մի դժուարութիւն
է ներկայանում, որը չէր կարելի յաղթել.
հրաւիրվածները հրաժարվում են նացիօնա-
լիստների առ ու հացից... Համայնապետները
սկսեցին մէկ մէկ հրաժարվել. մերժման նա-
մակները կարկտի նման տեղում էին նացիօնա-
լիստ Գրեթօվը գլխին. «Ձեզ հետ, որպէս հան-
րապետութեան ամենամահաշու թշնամու հետ,
մենք անկարող ենք սեղանակից լինել»,—այս
է այդ նամակների իմաստը: Մի ինքնաբերա-
կան միահամուռ բողբոջ գործը, հաւարու ա-
ղաղակ էր, որ բարձրացել էր Փրանսիայի
զանազան ծայրերից նացիօնալիստական քա-
ղաքականութեան դէմ:

Մարիզի ու ծանակի առարկայ դարձած, նա-
ցիօնալիստները մոլորվել էին, չը գտնէին ինչ
անել: Ահագին պատրաստութիւն, ահագին
ծախսեր արած, եւ միահամուռ հրաժարում.
ինչ անել: Գրեթօվը, պատճառ բերելով մի
փոքրիկ պատրուակ, յայտարարում է, որ մու-
նիսիպալիտէի բանկետը տեղի չի ունենայ: Եւ
հասկանալի էր...

Եանդուգն, փայլեց նացիօնալիզմը մերժված,
դատապարտված, դէն նետված Փրանսիայի
ներկայացուցիչների, ուրեմն ամբողջ ժողովրդի
կողմից: Դա մի սուկալի հարուած էր, որ հասց-
րեց Փրանսիան նացիօնալիզմին, այն Փրան-
սիան, որ աշխատում, տընում է, որ մոա-
ծում, խորհում է: Ոչ ոք, նացիօնալիստների
հակառակորդներն անգամ, չէին կարող երա-
զել մի այդպիսի չուտափութ խորտակում, մի
այդպիսի ողորմելի վախճան մի անդէկ, անդ-
բօշակ կուսակցութեան համար:

Բայց եթէ համայնապետները մերժում էին
նացիօնալիստների բանկետը, նրանք նոյն շուա-
պողութեամբ ընդունում էին կառավարութեան
հրաւերը: Միջնադպրութիւնը հրաւերել էր ամ-
բողջ Փրանսիայի անկտիւր բոլոր համայնապե-
տներին, որոնք թիւը 36,000-ից քիչ անց է:
Բայց արանց մեծամասնութիւնը լինելով բան-
ւոր եւ հողագործ գաղափարագից, հաւանակա-
նաբար չէր կարող ահագին ծախսեր անել գալ
Պարիզ մի ճաշկերոյթի: Կառավարութիւնը
պատրուած էր 9 կամ 10 հազար համայնապետի
եւ նա հէնց այդքան մարդու էլ պատրաստու-

թիւն էր տեսել, բայց որչափ եղաւ բոլորի
դարձանքը, երբ եկողները թիւը հասաւ 22
հազարի *): 22 հազար համայնապետներ, թող-
նելով իրանց արհեստը, գործարարն, ալգին,
դաշտը եւ արտը, Փրանսիայի ամենահեռաւոր,
նոյն իսկ յետ ընկած անկիւններից շտապել, ե-
կել էին տօնել հանրապետութեան տարեդա-
ձը, շտապել եկել էին վկայելու իրանց ջերմ
հաւատը դէպի հանրապետութիւնը: Դա մի
գեղեցիկ տեսարան էր, մի անմոռանալի օր-
նակ, որ տալիս էր Փրանսիան Պարիզ խմբված
հարիւր հազարաւոր օտարազգիներին...

Ս. Շիւսանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Անդրեական մամուլի մէջ շորից երեւացին
լուրեր Սօյսիւրի միջնադպրութեան մէջ տեղի
ունենալիք փոփոխութիւնների մասին: Այսպէս,
լրագիրները հաղորդում են, թէ զանաքանի
կանցլեր Հիկս-Բիչ կը նշանակվի Փօչենի տեղ
ծովային միջնադպրութեան մասնակցի մի մասը
նախնների միջնադպրութեան տեղը եւ բացի
ունիօնիստների կուսակցութեան ղեկավար կը
լինի համայնների ժողովում, իսկ գաղթական-
նութիւնների միջնադպրութեան պօրտֆէյը կը արվի
Սօյսիւրի փեսայ լորդ Սեյօրսին: Ինչ վե-
րաբերում է իրան Սօյսիւրի մէջ պետք է ա-
սել, որ նրա հրաժարականի հարցը արտա-
քին գործերի միջնադպրութեան պաշտօնից դեռ եւս
վերջնականապէս որոշված չէ: Ո՞ր կը լինի
Սօյսիւրի յաջորդը, եթէ նա հրաժարվի վա-
րել Անգլիայի արտաքին գործերը, նոյնպէս
յայտնի չէ: Պահպանողական մամուլի մի մասը
այդ միջնադպրութեան գլուխ կը կամենար տես-
նել Չեմբերլէնին, բայց միւս մասը նրան ան-
յարմար թեկնածու է համարում այդ պաշտօնի
համար: Այսպէս, օրինակ, «Daily Mail» լրա-
գիրը, որ միշտ վերմ երկրպագու է եղել Չեմ-
բերլէնին, մօտ օրերումս ապագից մի յօդուած,
որի մէջ առաջ բերելով գաղթականութիւնների
միջնադպրութեան խօսքերը, թէ «ազատամիտների
ձեռք բերած բոլոր տեղերը պարզամտութեամբ
պետք է համարել բօքսերի վաճառված տե-
ղեր», առում է, որ այդ տեսակ յայտարարու-
թիւնները կարող են միայն յուսումնաւոր առաջա-
ցնել երկրի մէջ: Անգլիայի անկախ պետք է
երկիւղ կրէ, որ գաղթականութիւնների մի-
ջնադպրութեան միջնադպրութեան կողմից մի-
ջնադպրութեան գլուխ անցնելով՝ կանգնած կը
լինի օտար պետութիւնների դէմ յանդիման:
Այս տեսակ երկիւղը հիմաւոր է եւ այն պատ-
ճառով, որ Չեմբերլէնի Լէյստօնի խօսած իր
նշանաւոր ճառի մէջ չափազանց անգուսպ լի-
զու բանեցրեց Փրանսիայի մասին: «Այդպիսի
լեզու—չարտաւարութիւն է «Daily Mail»—աւելի
վայել է արճարանի ծխասենեակին, քան անդ-
լիական թագուհու միջնադպրութեան: Եւ
կատարելապէս հակասակ է այն լուրը մարդ-
կանց երկիւղը, որոնք չէին կամենում մեր յա-
րաբերութիւնները օտար պետութիւնների հետ
ենթարկել վտանգի, յանձնելով նրանց ղեկա-
վարութիւնը Չեմբերլէնի նման մի մարդու:
Հակասակ է նոյնպէս եւ այն թերահաւա-
տութիւնը, որով վերաբերվում են արտասա-
նումս խօսելու այսպիսի ձեւեր ունեցող
մարդկանց»:

Սեպտեմբերի 24-ին Փրանսիական մի-
ջնադպրութեան Միլիթան, Լանսետան, Բօլէն եւ
Մօնիսիպալիտէի զանազան քաղաքներ: Ազ-
գաբնակչութիւնը ամեն տեղ ոգեւորված ըն-
դունելութիւն էր ցոյց տալիս նրանց: Առան-
ձին համակրական ցոյցերով ընդունվեց մի-
ջնադպրութեան Պաղ-Կալէի ղեկավարամեն-
տում: Առեւտրի միջնադպրութեան արտասանեց
Արրասում եւ Լէնսում, որոնց մէջ յայտնեց,
թէ վաղեկ-Լուսօսի միջնադպրութեան այժ-
ման դրութիւնը հաստատուն է եւ թէ մի-
ջնադպրութիւնը մտադրել է հիմա ձեռնամուխ
լինել խոստացված բարեփոխութիւնների իրա-
գործմանը: Արրասում արտասանած ճառի մէջ
Միլիթան, ի միջի այլոց, ասաց. «Այժմ, երբ
հանրապետութիւնը պաշտպանելու համար
կազմված միջնադպրութեանը, շնորհիւ հանրա-
պետականների միահամուռ ջանքերի, աշտուղից
խորտակել նացիօնալիստների միութիւնը, մենք
կարող ենք ինքնապաշտպանութիւնից անցնել
դէպի արդիւնաւոր գործունէութիւն եւ տալ
երկրին մի շարք բարեփոխութիւններ: Լէն-
սում Միլիթան յայտնեց, թէ կառավարութիւնը
մտադրել է առաջարկել պարզամեջքի մի օրի-
նագիծ, որով պետք է պարտադրել միջնադպր-
տաբան հաստատու լուծելու համար այն տա-
րաձայնութիւնները, որոնք ծագում են բա-
նուօրների եւ գործարանատերերի մէջ:

Նոր միջնադպրութեան կազմակերպութիւնը
եւալօնայումս յանձնված է մարկիզ Լուօյին:
«Vossische Zeitung» առում է, թէ միջնադպրա-
կան կրթիչի այդ տեսակ եղը կարելի էր ա-
ռաջուց գուշակել նրանից յետոյ, երբ մարկիզ
իստ նոր կուսակցութիւն կազմեց ազատա-
միտներից եւ առաջադիմականներից, որոնցից
150 մարդ պարզամիտի անդամներ են: Թէպէտ
եւ այդ կուսակցութիւնը կազմելիս մարկիզ Լուօ
վճարականապէս յայտնեց, թէ ի նկատի չունի
պարտաւել կառավարութիւնը եւ չէ ձգտում

*) 1889 ցուցահանդէսի համանման բանկետին
մասնակցել էին միմիայն 9500 համայնապետներ:

